

Տեղեկանք

Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Պռոշյան փողոցի 24 շենքին մատակարարվող խմելու ջրի որակի վերաբերյալ

Ա/թ հունիսի 17-ին ընկերության բաժանորդների սպասարկման կենտրոն (1-71 հեռախոսահամար) ահազանգ է ստացվել Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Պռոշյան փողոցի 24 շենքի 2-րդ բնակարանի բաժանորդից: Անմիջապես տեղամասի լաբորանտը այցելել է բնակարան, ջուր վերցրել և զգուշացրել բնակիչներին, որ մինչև անալիզի պատասխան ստանալը գերծ մնան ջուրը խմելու նպատակով օգտագործելուց: Կատարված անալիզի արդյունքում խմելու ջրում հայտաբերվել է ֆեկալ աղտոտում: Նույն օրը կանխարգելման նպատակով մաքրվել է շենքի մուտքի մոտ գտնվող կոյուղու դիտահորը: Նշված դիտահորը գտնվում է շենքի սահմազատման կետում և խցանման պատճառը հավանական է, որ շենքի ներքին ցանցն է եղել, որը ընկերության կողմից չի սպասարկվում:

Հունիսի 18-ի վերցված նմուշի մանրէաբանական հետազոտությունով ջրի որակի շեղում չի արձանագրվել (մանրէաբանական հետազոտության նախնական պատասխանը տրվում է 24 ժամ անց): Սակայն, նույն օրը ստացվել է կրկնակի ահազանգ՝ ջրում արտահայտված կոյուղու հոտի առկայության վերաբերյալ: Այդ պատճառով, նմուշներ են վերցվել նաև քաղաքի թիվ 1 ՕԿՁ-ից մատակարարվող Պռոշյան փողոցի 24 շենքի հարակից այլ շենքերից: Ստացված պատասխանները բացառել են հնարավոր այլ աղտոտման օջախի առկայությունը, այսպիսով հաստատելով, որ Պռոշյան փողոցի 24 շենքի աղտոտումը կրում է տեղային բնույթ: Ամեն դեպքում, բարդություններից խուսափելու համար որոշում է կայացվել փոխել շենքի մուտքագծի խողովակն ամբողջությամբ: Վթարվերականգնողական աշխատանքները ավարտվել են հունիսի 20-ին:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում արդեն իսկ հունիսի 20-ից խմելու ջրի որակը շենքում վերականգնվել է: Դա են վկայում ընկերության և սանիտարական ծառայությունների կողմից կատարված հետազոտությունների, այդ թվում հունիսի 22-ի համատեղ նմուշառման արդյունքները: Աշտարակ քաղաքի Պռոշյան փողոցին մատակարարվող խմելու ջրի որակը վերցրած է ընկերության հատուկ հսկողության տակ: